
ԱՎԵՍՏԱՆ՝ ՈՐՊԵՏ ՊԱՐՄԻՑ ՍՏՔԻ ԵՎ
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԽՈՍՔԻ ՀԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆ

ԿՈԶՄՈՅԱՆ Ա. Կ.

Պարսից գրականությունը Իրանի հոգևոր ժառանգության մեծագույն նվաճումն է, համաշխարհային մշակույթի լավագույն հատվածներից մեկը: Ամենալայն ընդհանրացմամբ պարսից գրականությունը կարելի է բաժանել երկու շրջանի՝ նախաիսլամական և իսլամական, որոնք երկուսն էլ իրանական ցեղերի և ժողովուրդների հոգևոր և մտավոր արարման արդյունքն են: Հնագույն շրջանից մեզ հասած գրավոր տեղեկությունների համար «ձայն տանք» լեռնալանջերի և բարձրաքանդակների վրա պահպանված սեպագրերին: Հատկապես Աքեմենյան Դարեհ Ա-ի արձանագրությունները մի կողմից պարսից կայսերական միասնականության փաստն են վավերացնում, մյուս կողմից իրանական գրավոր ժառանգության սաղմնավորումն ու սկիզբն են ազդարարում: Բազմաթիվ ժողովուրդներ դրանց միջոցով տեղեկություններ են ձեռք բերում իրենց անցյալի մասին, այդ թվում՝ հայերը: Օրինակ՝ Դարեհի սեպագրերից հայտնի է դառնում, որ պարսից իշխանությունը հայկական լեռնաշխարհում առաջին անգամ կայացել է մ.թ.ա. VI դարում, իսկ «Արմինայի» ժողովուրդը հայերը չէին ցանկանում հպատակ լինել, ապստամբում էին՝ փաստելով իրենց ըմբոստ և ազատատենչ գոյությունը: Բիսեթուն լեռան լանջին մինչև օրս պահպանված Դարեհի արձանագրություններն ուղեկցվում են բազմիցս կրկնվող «Ահուրա Մազդայի շնորհիվ» արտահայտությամբ: Դարեհի իշխանությունից, հզորությունից, հարստությունից, հաջողությունից վեր կար մի այլ ուժ: Դա իրանական դիցարանի ամենահմայիչ աստվածությունն էր՝ Ահուրա Մազդան (փառք.՝ Օրմազդ)՝ բարու և լույսի արարիչը, որին հակադրվում էր խավարի և չարության աստվածություն Ահրիմանը (Անգրա Մանյու): Սրանք պարսից գրադաշտական կրոնի դուալիստական հիմքն են: Այդ ամենը ամրագրված էր Սուրբ գրքում՝ Ավեստայում (օրենք, գիտելիք, դրվածք), որի պահպանված հատվածներն իրանական ժողովուրդների բարոյագիտական մտքի հնագույն նմուշներն են, գրական խոսքի ակունքների ուսումնասիրման անփոխարինելի հուշարձանը:

Ի դեպ, մինչև օրս չկա Ավեստայի ստեղծման թվագրության և աշխարհագրության ճշգրիտ և վերջնական պատասխանը: Ըստ Ֆիրդուսու «Շահնամեի» դասթանների (ասք)՝ գրադաշտության իրական հայրենիքը Բակտրիան է (Աֆղանստան): Չի բացառվում նաև Խորեզմը, ինչպես նաև Իրանի հյուսիսային մասը՝ Ատրպատականը: Տարակարծ են ինչպես եվրոպական և խորհրդային հետազոտողները, այնպես էլ պարսիկները: Ըստ Ահմադ Թաֆազդիի՝ Ավեստայի բնօրրանը ոչ թե Խորեզմն է, այլ ասիական ուրիշ տարածաշրջան-

ներն են՝ Միսթանը, Մերվը կամ Բալխը¹: «...Ավեստայի նույնիսկ կորած հատվածներում անգամ հազիվ թե տեղ գտներ որոշակի մատնացույց այն երկրի, որտեղ ծագեց զրադաշտականությունը ... Դա Միջին Ասիայի շրջաններն են և Իրանական բարձրավանդակի արևելքն է»²:

Ըստ ավանդության՝ կրոնի հիմնադիր Ջրադաշտը (ավեստ.՝ Զարաթուշտրա, պարսկ.՝ Զարթոշթ, հին հուն.՝ Զորոաստր) 30 տարեկանում Ահուրա Մազդայից ստացել է մարգարեության շնորհը, ստեղծել զրադաշտական կրոնը, իսկ Վշտասպ արքան ընդունել է նրա հավատը, որն իրանական պետականության ձևավորման կարևոր գործոնն ու սկիզբն էր:

Ջրադաշտը հավանաբար իրական դեմք է եղել: Սրանում ոչ մի արտառոց բան չկա, եթե նկատի ունենանք իսլամի հիմնադիր Մուհամադի հավաստի գոյությունը: Ենթադրվում է, որ ապրել է մ.թ.ա. VII-VI դդ.: Ընդունված է այն տեսակետը, որ նրան Ալեքսանդր Մակեդոնացուց բաժանում է մոտ 250 տարի: Ջրադաշտը սպանվել է ասորուշանի կրակի մոտ՝ աղոթելիս, քոչվոր ցեղերի՝ թուրերի կողմից: Իրանական դիցաբանության մեջ թուրանցի են կոչվել նույն ծագման արևելաիրանական ցեղերը, իսկ շատ ավելի հետո անվանումը դարձել է խորհրդանշական և ամրագրվել թյուրքական քոչվոր ցեղերի վրա³: Անապատաբնակ թուրերն իրենց անակնկալ հարձակումներով մշտապես անհանգստության մեջ են պահել նստակեցության ձգտող արևմտյան իրանցիներին, որոնց համար վաղուց արդեն կենցաղավարության հատկանիշներն էին աշխատանքը, հողագործությունը, տունը, կրակը, ընտանի կենդանիները և այլն: Այնքան տարբեր են եղել վերջիններիս «քաղաքակրթությունները», և այնքան դրամատիկ՝ բախումները, որ ոչ միայն արձագանք են գտել «Շահնամեի» դարակազմիկ բանավոր ու գրավոր աղբյուրներում, այլև հասել են մինչև մեր օրերը՝ որպես Իրան-Թուրան հավերժ հակոտնյա գաղափարներ: Պարսիկ հետազոտող Ահմադ Մաթթարյազը հավաստում է, որ թշնամին կոչվում էր թուրանցի, անկախ այն բանից թուրանցի էր, թուրք թե չին:

Գուցե այստեղից են սկիզբ առնում իրանցու մենթալիտետի ձևավորման որոշ տարրեր՝ սեփական առավելության գաղափարը, երբ նրա մտային, վարքային և գեղագիտական ընկալումների անհամապատասխանությունը մի այլ տեսակի հետ ընդհարումների էր հանգեցնում:

Ահավասիկ Ավեստայից մի հիմն՝ նվիրված բերրիության և ջրի աստված Արդվիխտրա Անահիտային, որտեղ Ջրադաշտը թախանձում է այն ամենը, ինչը հիմնականում պայմանավորում էր նստակյաց մշակույթի արժեքները՝ նվաճում, արարում, տնտեսում:

¹ Doctor **Ahmad Tafazoli**. *Tarique adabiyate Iran pish az eslam*, Tehran 1376, s. 35.

² **Мери Бойс**. *Зороастрийцы. Вера и обычаи*, 2-е изд., М., 1988, СШЦП. (послесловие Э. А. Грантовского, с. 280).

³ Այդ մասին տե՛ս **Ричард Фрай**. *Наследие Ирана*, М., 1972, с. 66-69, տե՛ս նաև՝ *Мифы народов мира*, М., 1992.

Բարի, հզոր
Արդվիսուրա Անահիտա,
Այնպիսի ողորմածություն եմ խնդրում քեզանից,
Որ ես լինելով սիրելի,
Մեծածավալ տերություններ ունենամ,
Ուր շատ են եփում ուտելիքներ, ստանում են մեծ պատատներ,
Ուր վրնջում են նժույզները, դրդում են մարտակառքերը,
Ուր թափահարում են մտրակը, ուր շատ որոճում են,
Ուր պահված են կերակուրներ,
Ուր հիանալի բույրեր են:
Մառաններում ցանկալով պահում են
Առատորեն՝ ամենը, ինչը հարկավոր է լավ կյանքի համար⁴:

(ընդգծումը մերն է՝ Ա. Կ.)

Ակնհայտ է զրադաշտական կրոնի ոչ ասկետական ոգին, որը ոչ միայն հեռու է ճգնակեցության հորդորներից, այլև արձագանքն է բնական ձգտման, հարմարակեցության օրենքների և կենսաբանական էգոիզմի՝ ուտելիք, պատառ, կերակուր, մառան և այլն:

Երիտասարդ տարիներին Զրադաշտը մասնակցել է հեթանոսական ծիսական զոհաբերություններին, որոնք «հառմա» կոչվող արբեցուցիչ բուսախմբի ազդեցության ներքո վերածվել են հուզավառ խրախճանքների և ուղեկցվել անասունների սպանողով: Այդ է պատճառը, որ իր մարգարեության տարածումից հետո Զրադաշտն արգելել է տնտեսությունը քայքայող զանգվածային զոհաբերությունները:

Ավեստան դարեր շարունակ պահպանվել է ժողովրդի հիշողության մեջ և փոխանցվել սերունդներին: Հետևաբար, ինչպես բոլոր հին հուշարձանները, այն նույնպես տարաշերտ է և ամեն մի ժամանակաշրջանում հարմարվել է ժամանակին, մոգերի կողմից հարքստացվել բազմաթիվ ընդմիջարկություններով (լատ. *interpolatio*): Լեզուն հենց այդպես էլ կոչվում է՝ «Ավեստայի լեզու»: Ավեստան կողիֆիկացվել է Մասանյանների օրոք և մեզ է հասել երկու տարբերակով. առաջինը գրված է Ավեստայի լեզվով և ներառում է հետևյալ մասերը՝ Յասնա, Յաշտ, Վիսպերեդ, Վենդիդատ կամ Վիդեդատ և Խորդ Ավեստա: Երկրորդը գրված է միջին պարսկերենով, կան տեքստն ուղեկցող մեկնաբանություններ (գենդ), հայտնի է որպես Ավեստա և Զենդ կամ ոչ ճիշտ՝ «Զենդավեստա»:

Ֆրանսիացի հետազոտող Անկետիլ Դյուպերոնը, որ դեռևս երիտասարդ տարիներից համակված էր Ավեստայի տեքստը հասկանալու տենդով, արաբական արշավանքներից և իսլամից Հնդկաստան փախած զրադաշտականների միջավայրում և օգնությամբ սովորեց ավեստայի լեզուն, թարգմանեց պահպանված հատվածները և 1771 թ. հրատարակեց: Ինտելեկտուալ միտքը, որ Ավեստայի տեքս-

⁴ Թարգմ. ըստ Ե. Է. Բերտելսի, Отрывки из Авесты, пер. с языка Авесты Е. Бертельс (Восток, кн. 4, М.-Л., 1924 (5 Яшт)).

տից ակնկալում էր կուռ և հետևողական կրոնափիլիսոփայական դոկտրին, դրան ուղեկցող հարուստ դիցաբանություն և այլն, ականատեսը եղավ աղոթքների, բողոքների, հարցումների, նզովքների, ներբողների, երդումների, դիմումների, խնդրանքների շարքի: Եվ այդ ամենը միտված էր հաստատելու զրադաշտականության ամենաարմատական դրույթը՝ չարն ու բարին, լույսն ու խավարը: Այս դուալիզմից ծնվում էին այդ կրոնի երկու ծայրահեղ բարոյական կատեգորիաները՝ բարի միտք, բարի խոսք, բարի գործ և չար միտք, չար խոսք, չար գործ:

Ավեստայի բազմաթիվ հատվածներում կարելի է տեսնել խոհեր և օնտոլոգիական մտորումներ շրջակա աշխարհի երևույթների նկատմամբ, որ սաղմն է պարսից պոեզիայում շատ ավելի ուշ ձևավորված փիլիսոփայական քնարերգության:

Արդ, հարցնում եմ քեզ, ասա ինձ ճշմարտությունը, ո՛վ Ահուրա,
Այդ ո՞ր ճարտարաձեռնն է ստեղծել Լույսն ու Խավարը,
Այդ ո՞ր ճարտարաձեռնն է ստեղծել քունն ու արթնությունը,
Որպեսզի բանական մարդուն հիշեցնի իր անելիքների մասին...⁵

Հռետորական հարցադրումը հաստուկ է նաև հնագույն հուշարձան «Ռիզվեդային»:
Հարցը ենթադրում է պատասխան, որի միջոցով հավատի ջատագովը շարադրում է սեփական կրոնական ուսմունքը: Ի դեպ, միջնադարյան հայ փիլիսոփա Գրիգոր Տաթևացու (XIV դ.) աշխատությունը, ի հակաճառություն իսլամի, հենց այդպես էլ կոչվում է՝ «Գիրք հարցմանց»⁶: Ինչպես տեսնում ենք, այդ երևույթը կրկնվում է տարբեր մշակույթներում և հաստուկ է բոլոր ժամանակների մարդկային մտքին: Ի դեպ, Ռիչարդ Ֆրային զարմացրել է Զրադաշտի «ընտանեկարի» տոնը, որով նա գրուցում է աստծո հետ⁷:

Ավեստայից մեզ հասած հատվածները իրանական ժողովրդի մտքի և գեղարվեստական խոսքի ակունքներն են, նաև այն դիցաբանական հենքը, որի վրա բարձրացավ պարսից էպոսը՝ Շահնամեն: Դրանցում գերակայում են դիմում մենախոսությունները, երկխոսությունները, հռետորական հարցումները, անունների թվարկումները, իսկ ձևի պոետիկայում ակնհայտ են կրկնությունները, կուտակումները, կրկնատողերը, որ հաստուկ են պարզ ու թափանցիկ բանահյուսական խոսքին:

Օրինակ.

Պարզևիր մեզ այնպիսի հաջողություն,
Ո՛վ բարի, հզոր Արդվիհսուրա Անահիտա,
Որ մենք հաղթող դառնանք թուրանական Դանավների վրա...,
Նրանց հարստության և բարիքների համար (մղվող) կովում:

⁵ Թարգմ.՝ ըստ Բ. Բրագինսկու, տե՛ս Брагинский И. С. Из истории таджикской и персидской литературы, М., 1972, с. 123.

⁶ Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, Երուսաղեմ, 1993:

⁷ Հմմտ.՝ Ричард Фрай, նշվ. աշխ., էջ 56:

Կամ՝

Պարզևիր ինձ այնպիսի հաջողություն,
Ո՛վ բարի, հզոր Արդվիսուրա Անահիտա,
Որ ես հաղթող դառնամ Աժի Դահակի վրա,
Երեք երախ, երեք գլուխ, վեց աչք ունեցողի.....ն այլն:

Ամեն խնդրանքից առաջ առկա են կրկնատողերը՝

Եվ պարզևեց նրանց հաջողությունն այդ,
Արդվիսուրա Անահիտան,
Որ միշտ նվիրում է խնդրողին հաջողություն .. և այլն⁸:

Առավել հասկանալի է դառնում Դարեհի արձանագրության մեջ Արամազդի մշտական ներկայության պատճառը: Դարեհը յուրաքանչյուր ճակատագրական քայլից առաջ խնդրել է Ահուրա Մազդայի օգնությունը:

Անկետիլ Դյուպերոնի թարգմանությունը, որ «դարի հայտնագործություն էր», իր ժամանակին չընդունվեց և չգնահատվեց: Ավելին, նա մեղադրվեց խաբեության մեջ և մահկանացուն կնքեց անապահով ու միայնակ: Մինչ հայտնի արևելագետ Վիլյամ Ջոնսը հայտարարում էր, թե «լուսավորյալ Եվրոպան» նրա այդ թարգմանության կարիքը չուներ, արևելագետները կատարելագործվում էին Ավեստայի ուսումնասիրության մեջ և հաստատում Դյուպերոնի տեքստի հավաստիությունը: Հենց նույն «լուսավորյալ» Եվրոպան արդեն լսում էր Ջրադաշտի՝ հազարամյակների խորքից եկող ստեղծարար պատվիրանների ձայնը և իր «բարձր» մշակույթն էր հղկում՝ հաղորդակցելով հնագույնն ու նորը, Արևելքն ու Արևմուտքը: Ֆ. Նիցշեն նիհիլիզմի տվայտանքներից ծնված՝ ամենագոր մարդու պատկերացումներն էր քարոզում Ջրադաշտի շուրթերով («Այսպես խոսեց Ջրադաշտը»⁹), իսկ Յ. Վ. Գյոթեն իր մարդասիրական գաղափարներն էր ազդարարում Ջրադաշտի օրենքների միջոցով: Գյոթեի «Պարսից հին կրոնի պատգամը» բանաստեղծությունը լույսի, բարու, արարումի փառաբանություն է, որտեղ հատկապես ուշագրավ են հետևյալ տողերը.

Հանգուցյալներին հանձնեք ողջերի վարվեցողությանը,
(Ինչպես նաև մեռած) կենդանիներին՝ ծածկեք հողով,
Որքան որ ուժերը ներում են,
Եվ կծածկվի այն ամենը, ինչը մեզ անմաքուր է թվում¹⁰:

⁸ Թարգմ.՝ ըստ Բ. Բրագինսկու, Брагинский И. С. Из истории, с. 60, 64 (5 Яшт, 9, 18).

⁹ Ֆրիդրիխ Նիցշե, Այսպես խոսեց Ջրադաշտը, գերմ. թարգմ. Հակոբ Մովսեսյան, Ե., 2008:

¹⁰ Johann Wolfgang von Goethe. West-östlicher Divan, այս և հաջորդ տողացի թարգմ. գերմաներենից՝ Տիգրան Միսյանի. տուն 33-38: Նաև՝ Гере И. В. Западно-восточный диван, М., 1988, с. 116-119.

Սա Ավեստայի գաղափարների ռեցեպցիան է, որում Գյոթեն հորդորում է դիակները հանձնել հողին և դրանով կոտրել զրադաշտական կրոնի կարևոր արգելքներից մեկը: Ե՛վ Ավեստայից, և՛ սասանյան շրջանի փահլավական գրականությունից պարզ է դառնում, որ «սուրբ» հողը, ջուրը, կրակը չապականելու համար դիակները կախում էին բարձր ծերպերից, հանձնում թռչուններին և կենդանիներին: Վախճանաբանության գաղափարը՝ դժոխքի և դրախտի գոյությունը, հոգու հավերժության հավատն անհանդուրժող էին դարձնում զրադաշտականներին հանգուցյալների նկատմամբ: Նրանք մերժում էին անհոգի մարմինը և «անմաքուրը» չէին հանձնում «մաքուրին»: Ավելին, Գյոթեն՝ ներդաշնակության և գեղեցկության գաղափարակիրը, հորդորում է.

Թաղել դիակները սիրուն կարգ ու շարքով,
Որ արևը սիրով դաշտերն այդ լուսավորի...

Գարծում ենք, այս և նման արտառոց երևույթներն են ապշահար արել XVIII դարի եվրոպացուն, որը չի հաշտվել Դյուպերոնի թարգմանության հետ:

Ավեստայի հնագույն մասը Գաթան է, որը մտնում է «Յասնայի» մեջ և թարգմանվում է որպես «Երգ երգոց»: Ավանդական է այն կարծիքը, որ այդ հիմները գրել է հենց Զրադաշտը, և Ավեստայի ամենահավաստի (հուն. *authenticus*) և հնագույն հատվածն են ներկայացնում: Անգամ փորձեր են արվել Զրադաշտի կենսագրությունը ուրվագծել դրանց հիման վրա, քանի որ, ինչպես նշում է Ե. Է. Բերտելսը, «...Գաթայում տեղ-տեղ հստակորեն զգացվում է հեղինակային անհատականությունը»¹¹:

Ահա քրեստոմատիկ մի հատված, առանց որի ոչ ոք չի պատկերացնում Ավեստան: Ժամանակակից պոեզիայում այն կանվանեինք ռեֆլեքսիա:

Ո՞ր երկրում ապաստանեմ, ո՞ւմ ապավինեմ,
Քշում են ինձ իմ հայրենակիցներից և ցեղակիցներից,
Բարեհաճ չեն իմ հանդեպ՝ և՛ տոհմի միությունը,
Ե՛վ երկրիս՝ դրուջին (ստի դեր - Կ. Ա.) ծնրադրող կառավարիչները:
Ինչպես արժանանամ ես քո բարեհաճությանը, ո՞վ Մազդա Ահուրա,
Չգիտեմ, թե ինչու, ո՞վ Մազդա, չկա ինձ հաջողություն,
Սակավ են իմ անասուններն ու սակավ՝ իմ մարդիկ,
Հեկեկում եմ քո առջև, դե, նայի՛ր, ով Ահուրա,
Զորակցությունդ առաքիր ինձ, որպիսին ընկերը տալիս է ընկերոջը:
Սովորեցրու ինչպես աշայի (ճշմարտության և առաքինության աստվածություն - Կ. Ա.) միջոցով ձեռք բերել բարի միտք¹²:

¹¹ Бертельс Е. Э. История персидско-таджикской литературы, М., 1960, с. 53, նաև՝ История персидской и таджикской литератур, под ред. Яна Рипка, глава 1 (Отакар Клима), М., 1970; Абаев В. И. Миф и история в гатах Зороастра (Историко-филологические исследования, М., 1974).

¹² Թարգմ.՝ ըստ Ե. Է. Բերտելսի, Бертельс Е. Э., նշվ. աշխ., էջ 53:

Ահա այսպիսի զգացմունքային դրսևորումներ են ստացել Ավեստայում Ջրադաշտ մարգարեի անհաջողություններն ու որոնումները: Մա էկզիստենցիալ միայնության ճիչ չէ, քանի որ Ջրադաշտն ուներ հենման կետ: Դա հզոր աստվածություն Արամազդն էր: Մենախոսությունը ապաստոցիալականացված և օտարված մարդու խոսք է, որը գիտակցում է իր եզակիությունը: Միայնության այդօրինակ մոդելը, ինչպես տեսնում ենք, գալիս է հազարամյակների խորքից և հասնում մեր օրերը: Այսօր այն տեսականացվում է բազմաթիվ կտրվածքներով՝ եզակիություն և ստանդարտ, միջակություն և անհատականություն, ամբոյս և հանճար և այլն:

Ենթադրում ենք, որ Ջրադաշտը ստին «ծնրադրող է» համարել նաև բոլոր նրանց, ովքեր չեն ընդունել իր մարգարեական բարոյագիտությունը: Ակնհայտ է «ռեֆորմատոր-իշխանություն» բախումը: Ինչ-որ ժամանակ Ջրադաշտի մարգարեությունը չի ընդունվել: Բոլոր ժամանակների իշխողները, որոնց հաջողությունը հին ինստիտուտների անփոփոխ կայունության մեջ է, մերժել են ռեֆորմացիան: Հիշենք Մուհամադ մարգարեին (VII դ.), որին չէին ընդունում իշխող «դորեյշ» ցեղակիցներն ու «հաշեմի» տոհմակիցները:

Ինչ վերաբերում է խոսքի արվեստին, ապա այն ուղղամիտ է, պարզ ու այլաբանությունից զուրկ:

Շատ ավելի ուշ՝ Սասանյանների շրջանում ստեղծված փառլավական հուշարձաններում (օրինակ՝ «Արտա Վիրաֆ նամե»), որոնք, բնականաբար, ձևավորվել և կայացել են զրադաշտական վարդապետության հիմքի վրա, ուղղակի մեջբերումներ կան գաթերից և հատկապես նշված հատվածից: Չարաբարո մարդու հոգին, դժոխքի հարյուրավոր ահասարսուռ պատիժներին դեմ հանդիման, անելանելի թախիծով կրկնում է Ջրադաշտի խոսքերը.

Արարիչ Ահուրամազդ,
Ո՞ր երկիրը գնամ և ո՞ւմ ապավեն վերցնեմ¹³:

Ավեստայի պոետիկայի խնդիրը հակիրճ ամփոփել է Կ. Չալեմանը. «...Վենդիդատի, Վիսպերեդի Յասնայի հեղինակը բանաստեղծ չէր..., նա քուրմ էր...»¹⁴: Չալեմանին այդ եզրակացությանը հանգեցրել է Ավեստայի համեմատությունը հնագույն հնդկական հուշարձան «Ռիգվեդայի» հետ: Անշուշտ, այդ համեմատության մեջ է Ավեստան տանուլ տալիս, քանի որ չունի Ռիգվեդայի «...վառ երևակայությունը, բանաստեղծական պատկերների փայլը և մեծասքանչ լեզուն...»: Մակայն, եթե նկատի ունենանք «քնարերգություն» եզրի (հուն. *lyrikos*) սահմանումը, թե այն հեղինակի զգացմունքների, տրամադրության, հույզերի և ապրումների արտահայտությունն է, ապա կարող ենք փաստել, որ հիշատակված օրինակն իրականում զուրկ չէ խոհական քնարերգության տարրերից: Թախծի

¹³ Արտա Վիրապ նամակ. Յուշտի Ֆրիան. պառլավերեն բն. թարգ. և ծանոթ. պրոֆ. Ռ. Թ. Արրահամյանը, Ե., 1958, էջ 64:

¹⁴ Հմմտ. **Залеман К.** Очерк древнеперсидской литературы (Всеобщая история литературы, под ред. В. Ф. Корша, т. 1, ч. 1, СПб., 1880, с. 185-186).

և բողոքի թեման հետագայում անցնում է արդեն իսլամական Իրանի ողջ պոեզիայի միջով:

Այս ամենը ուրվագծում է ժամանակների կապը, պարսից մտքի և խոսքի հետևողական ու շարունակական ընթացքը:

Ավեստայի «Վիսպերեդ» հատվածը առավելապես աղոթքների և նգովքների զիրք է, որը, որոշ հետազոտողների կարծիքով, առանձնահատուկ հետաքրքրություն չի ներկայացնում, իսկ Վենդիդադը՝ (Վիդեվդատ՝ դևերի դեմ) նորմերի համալիր է, որից տեղեկանում ենք կարևորագույն պաշտամունքների մասին՝ կրակի, ջրի, բույսերի, արևի, հողի, սուրբ կենդանիների և այլն: Պարզվում է, որ մեծագույն արժեք էր ազնիվ խոսքը և ձեռքսեղմումը:

Հետաքրքիր են ձոները՝ (Յաշթ) Արևին (խորշիդյաշթ), Լուսնին (մահյաշթ), ամպրոպի և հաղթանակի աստված Վահագնին (Վրթրագնա), լույսի և հավատարմության աստված Միհրին (Միթրա), Միրիուս աստղին (Թիշթրիայաշթ) և այլն: Ահա մի հատված.

Եվ երբ ելնում է արևը,
Մաքրվում է հողը՝ ստեղծված Ահուրայի կողմից,
Մաքրվում են ջրերը հոսող,
Մաքրվում են աղբյուրները,
Մաքրվում են ծովերը,
Մաքրվում են ջրամբարները,
Մաքրվում են սուրբ ոգու բարեպաշտ արարյալները:
(Թարգմ.՝ ըստ Բահմանի)

Կամ՝
Մենք փառաբանում ենք Թիշթրիային,
Փայլուն ու շողողուն աստղին,
Որին կարոտում են ջրերը՝
Եվ լճացած, և՛ հոսող՝
Աղբյուրների և գետերի, ձնհալային ու անձրևային.
«Երբ կծագի
Թիշթրիան փայլուն, շողողուն...»¹⁵:

(...Թող) առանց արգելքների հոսեն,
Ցանքերին՝ խոշոր հատիկով,
Խոտերին՝ մանր սերմերով,
Եվ ողջ նյութեղեն աշխարհին...¹⁶

Պարսիկների մոտ ջրի պաշտամունքը դեռևս Հերոդոտոսն է փաստել (մ.թ.ա. V դ.): Նա գրում է. «Գետի մեջ նրանք չեն միգում, չեն թքում, չեն լվանում իրենց ձեռքերը, ոչ էլ իսկ թույլ տալիս ուրիշներին՝ այդ անել»¹⁷:

¹⁵ Թարգմ. ըստ Ի. Բրագինսկու, Брагинский И. С. նշվ. աշխ., էջ 72 (8 Яшт., 41).

¹⁶ Թարգմ.՝ ըստ Ե. Է. Բերտելսի, Отрывки из Авесты (8 Яшт., 29).

¹⁷ Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, Թարգմ.՝ Միմոն Կրկյաշարյանի, Ե., 1986, էջ 138:

Սասանյան շրջանի «Արտա Վիրաֆ նամե» փառաբանական աշխարհիկ գրական հուշարձանում բազմիցս կրկնվում է ջուրն ապականելու արգելքը: Օրինակ՝ դժոխքում դեգերում են այն մարդկանց հոգիները, «...որոնք երկրի վրա չեն հոգացել ջրի և կրակի մասին, աղտոտությունները լցրել են ջրի և կրակի մեջ...», կամ «...երկրի վրա գլուխը, երեսը, կեղտոտ ձեռքերը և այլ անդամների աղտոտությունը լվացել են կանգնած մեծ ջրում...»¹⁸:

Վաղնջական մարդու խոնարհումը բնության գերագույն ուժի առջև, ինչպես նաև բնության հետ ներդաշնակ լինելու ձգտումն ինքնին հիմնավորված են: Նախ՝ բնությունը նրա հանգրվանն ու կենսագործունեության աղբյուրն է, նաև գեղագիտական ընկալումների չափանիշը, հետևաբար՝ պաշտամունքի առարկան: Իրականում պաշտամունքը գալիս է մի կողմից մարդու խիստ կախվածությունից, անգործությունից, մյուս կողմից՝ այն փորձից, որը հազարավոր տարիներ մարդիկ փոխանցել են միմյանց: Ավեստայում ներբողների վեկտորն ուղղված է ոչ այնքան մարդ արարածին, որքան բնությանը և տարերքին, որ բխում է բնության մշտնջենական լինելու և մարդու ժամանակավոր գոյության փորձից:

Գյոթեն «Արևմտյան-Արևելյան Դիվանում» գրում է. «Չպետք է բարկանանք, եթե Հաֆեզն ընթերցելիս որևէ մեկի միտքը գա Հորացիոսը..., դա դարաշրջանների ընդհանրություններից է»¹⁹:

Այստեղ մեր «միտքը եկավ» XX դ. պարսիկ բանաստեղծ Սոհրաբ Սեփեհրին, որի ողջ պոեզիան շնչում է արևի, լույսի, ջրի և բնության հետ ձուլվելու հնդիրանական պատկերացումներով, բնության իմպրեսիոնիստական ընկալմամբ: Այս գույություններում չկա «դարաշրջանների նմանություն», սակայն կա հավերժորեն անփոփոխ արժեքների ամենապարզ գիտակցում, գուցե ինչ-որ չափով նաև՝ անցյալի արձագանք:

Չապականենք ջուրը, (آب را گل دکن)
Ներքևում ջուր է խմում կարծես ինչ-որ մի աղավնի,

.....
Չապականենք ջուրը,
Գուցե այս ջուրը հոսող գնում է դեպի
Բարդին արծաթափայլ.
Ինչ անուշ է այս ջուրը,
Ինչ գուլալ է այս գետը,
Գետնին մերձ՝ մարդիկ հասկանում են ջուրը,
Չապականենք՝ մենք նույնպես,
Չապականենք ջուրը²⁰:

Հետագայում, երբ գրադաշտականությունից իսլամ, հնից միջնադար անցման հետ մեկտեղ տեղի են ունենում քաղաքակրթական փոփոխություններ, ապա աշխարհի ընկալման դիցապոետիկական պատկերացումներին փոխարինելու է գալիս միջնադարյան տիպի «ավանդական»,

¹⁸ Արտա Վիրապ նամակ. Յուշտի Ֆրիան, էջ 77-88:

¹⁹ Հմմտ. Gere H. B. Западновосточный диван, М., 1988, с. 222.

²⁰ Sohrab Sepehri (Mahmud Hugugi), Tehran, 1378, s. 210 (պարսկ.), տե՛ս Սոհրաբ Սեփեհրի, Կանաչ ծավալ, պարսկ. թարգմ. Էդուարդ Հախվերդյանը, Ե., 2000, էջ 31:

«նորմատիվ» մշակույթը. բնանկարը ուղեկցում է շատ ժանրերի և ձեռք է բերում հարաբերականորեն ինքնավար հատկանիշներ: Այսինքն, բնանկարային քնարերգությունն անկախ, գեղագիտական մի երևույթ է դառնում, ինքն իր համար: Օրինակ՝ իսլամական պարսից պոեզիայում ներբողի առաջին մասը (նասիբ), որպես կանոն, կարող էր բնության նկարագիր լինել: Ճիշտ է, Ավեստան առավելապես ազգագրական, պատմական և լեզվամշակութային արժեք ունի, Զրադաշտն էլ գաղափարախոս է և ոչ թե խոսքի վարպետ, այնուհանդերձ, չի կարելի Ավեստայում իսպառ մերժել պոետիկական և գեղարվեստական մտածողության տարրը:

Ահավասիկ Ավեստայի հինգերորդ հանրահայտ «Յաշթից» մի հատված.

Կանգնած է տեսանելի
Արդվիստուրա Անահիտան.
Հրաշալի կույսի տեսքով (որը)
Շատ ուժեղ (է), լավ մարմնակազմով,
Բարձր գոտևորված,
Ազնիվ ցեղից, ընտիր.
Թանկարժեք պատմուճան հագած՝
Նրբահյուս, ոսկեզօծ.....
Զրասամույրի մորթի է հագած,
Արդվիստուրա Անահիտան,
Երեք հարյուր ջրասամույրի՝
Չորս անգամ մայրացած...²¹

.....
Հիրավի գեղեցիկ են նրա ձեռքերը,
Սպիտակ, առավել գորեղ, քան նժույգների (կոնքերը)²²:

Մեկ այլ հատված՝ լույսի և հավատարմության աստված Միթրայի (Միհր) ներբողից.

Երկրպագում ենք մենք,
Միթրային՝ լայնածավալ արոտավայրեր ունեցողին,
Ճշմարտախոսին, ճարտարախոսին,
Հազարականջին՝ հիանալի մարմնակազմով,
Տասը հազար աչքանուն, բարձրահասակ,
հեռատեսին, հզորին.... և այլն²³:

Արտաքին գեղեցկության չափանիշը շարժուն երևույթ է, և ամեն պատմական դարաշրջան արժևորման իր համակարգն ունի: Աստվածների հզոր, տիրապետող և մոնումենտալ կերպարը դիցաբանական մտածողության արձագանքն է, անտիկ պատկերացումների և կատարելության իդեալ: Ակնհայտ է չափազանցությունը, որ դիցապոետիկ պատկերացումների

²¹ Թարգմ.՝ ըստ Ե. Է. Բերտելսի, Бертельс Е. Э., նշվ. աշխ., էջ 62 (126,129):

²² Թարգմ.՝ ըստ Բ. Բրագինսկու, Брагинский И. С., նշվ. աշխ., էջ 57 (7), с. 73. (10 Яшт, 35):

²³ Նույն տեղում, էջ 73 (10 Яшт, 35):

արդյունք է՝ մեծի, հզորի, շատի և ամենակարողի հատկանիշ: Կարևորվում են կազմվածքը և կեցվածքը, որ նրանց բարձրացնում է ամենայնի վրա և ընդգծում մնացյալ նյութականի չնչին լինելը: Համեմատության համար հիշենք «Վահագնի ծնունդը», որը Խորենացու միջոցով մեզ հասած հեթանոսական արվեստի մի նմուշ է: Սրանում ներկա են աշխարհի գոյի չորս առաջնային տարրերը՝ օդ-երկինք, հող-երկիր, ջուր-ծով և կրակ-բոց:

Երկներ երկիր, երկներ երկին,
Երկներ և զծովն ծիրանի,
Երկն ի ծովուն ուներ և զկարմրիկն եղեգնիկ:
Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փող բոց ելանէր,
Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ.
Նա հուր հեր ուներ, ապա թէ բոց ուներ մօրուս,
Եւ աշկունքն էին արեգակունք²⁴:

Անհամեմատելի պատկերավորություն, տիեզերական մոնումենտալիզմ, խիտ բանաստեղծական միջոցներ՝ էպիտետներ, մետաֆորներ, չափազանցություն, և այդ ամենը՝ ուղղված լույսի բազմապիսի զուգորդություններին: Ամպրոպի և կայծակի աստված «վիշապաքաղ Վահագն» զուգահեռն է իրանական դիցարանի «դիվասպան-Վրթրագնայի», որն Ավեստայում մեզ է ներկայանում իր կերպարանափոխություններով, նաև պատանյակի. և բոլոր կերպերի մեջ՝ ուժեղ ու գեղեցիկ.

Ներկայացավ Զրադաշտին
Վեցերորդ անգամ այսպես. Վրթրագնան՝
Ահուրայի ստեղծյալը,
(Որպես) սքանչելի պատանյակ
Տասնհինգ տարեկան:
Գեղեցիկ, պայծառաչ
Մլացիկ, արագավազ:
Ներկայացավ այսպես, Վրթրագնան²⁵:

Աստվածներն իդեալական են: Իսկ որո՞նք են վաղնջական մարդու գեղեցկության չափանիշները: Աստված ամեն մի էակի հնարավորություն է տալիս բնության հետ ներդաշնակվելու և գոյատևելու: Այդօրինակ ներդաշնակությունը բնության մեջ ապրելու, դիմագրավումի և տոկոնունության գրավականն է: Այդ է պատճառը, որ նրանց չափանիշը դուրս չի գալիս ֆիզիկականի սահմաններից: Գեղեցիկ է այն, ինչը

²⁴ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, գիրք առաջին, գլուխ ԼԱ(բ), Ե., 1951: Վահագնի կերպարի կառուցվածքի մասին տե՛ս **Топоров В. Н.** Об отражении одного индоевропейского мифа в древнеармянской традиции (Պատմա-բանասիրական հանդես, 1977, N 3):

²⁵ Թարգմ.՝ ըստ Բ. Ստերլին-Գամենսկու: **Авеста.** Избранные гимны из Видевдата, пер. с авест. Ивана Стеблин-Каменского, М., 1993, с. 121 (14 Яшт, 6. 16).

պրագմատիկ է: Գեղեցիկ է հզորը, համաչափը, ներդաշնակը: Այսօրվա եզրաքանությանը՝ նաև «պահանջվածը»:

Այն հարցին, թե ինչպիսի՞ մեկը գոհ մատուցի իրեն, Արդվիստրա Անահիտան սառնասրտորեն թվարկում է մեզ հայտնի և անհայտ ֆիզիկական արատները՝ կուզ, կույր, գաճաճ, բորոտ, ընկնավոր և այլն, ու պահանջում է անթերի մեկին, որի շուրթերին միշտ հնչում են «Գաթերի» աղոթքները:

Ջարմանալի չէ, որ այս պատկերացումներում բացակայում է մարդասիրությունը, խղճի և կենսական արդարության զգացումը, ինչն առավել բնորոշ է «հոգևոր գեղեցկություն» հասկացությանը, որը մենք տեսնում ենք ավելի ուշ մոնոթեիստական հավատներում:

Ավեստան կրոնական հուշարձան է, և աշխարհիկ տարրը դրանում ճիշտ այնքան է, որքանով որ արտացոլում է տնտեսությունը, ռացիոնալը, փորձով ապացուցված օգտակարը (արոտավայրեր, նժույգներ և այլն): Բնության և նյութական բարիքների նկատմամբ աչքի է ընկնում պահանջմունքային վերաբերմունքը: Գեղեցիկ է այն, ինչն օգտակար է: Գործնականի և պրագմատիկի կարևորությանն են ծառայում համեմատությունները: Անահիտի բազուկները համեմատվում են ձիու կոնքերի հետ: Իսկ X դ. իսլամական շրջանի բանաստեղծ Ռուդաքիի ներբողյալի բերանը սադաֆ է, «ատամները՝ մարգարիտ», (صدف-دهن در-دندان) որովհետև նորաստեղծ արքունական պոեզիայի և նրբաճաշակ ֆեոդալի գեղագիտությունը այլ արժեքներ էր թելադրում: Արդեն վաղուց տեղի էր ունեցել և՛ քաղաքակրթական, և՛ «մշակութային տիպի» փոփոխություն. հեթանոսությունից՝ մոնոթեիզմ, հնադարից՝ միջնադար: Քաղաքակրթական տեղաշարժերի հետ «փոխվում էին աստվածները», սակայն մարդկային գեղարվեստական մտածողության հակումները մնում էին անփոփոխ: Մոնումենտալ-դիցապոետիկ պատկերացումներին փոխարինում էին նոր՝ կամերային պատկերները, իսկ աստվածություններին՝ մեկենասները:

Ավեստան, ինչպես բոլոր հին հուշարձանները, սինկրետիկ է, և անհնար է այնտեղ առանձնացնել ժանրերը: Ավեստայի մասնագետները պնդում են, որ Ավեստայում չկա սիրային քնարերգություն: Այո, ինչպես տեսանք Ավեստայում, կան հոռետորական, քարոզչական, փիլիսոփայական, ուսուցողական, խոհական քնարերգության տարրեր, սակայն ոչ սիրային: Նաև անառարկելի է այն փաստը, որ պարսից էպոսի՝ «Շահնամեի» արմատները գնում են դեպի Ավեստայի դրվագները: Ֆիրդուսու էպոսի բազմաթիվ դասթաններից է սկիզբ առել XI-XII դարերի պարսից սիրային պոեմը:

Եվս մի հետաքրքիր դիտարկում: «Մարմնի փառաբանությունը», որպես ձևավորված սիրային քնարերգության արտահայտություն, մենք երկար դարեր տեսնելու ենք հետագայում՝ պարսից-իսլամական պոեզիայում: Հենց այդ իկոնոգրաֆիկ մեթոդով էր զարգանում պարսից սիրային պոեզիայի մի տեսակը, որը սիրո օբյեկտի նկատմամբ բնական սեռային ձգտումներից զուրկ, անդեմ, անհույզ մի պատկեր էր ներկայացնում: Սիրային բանաստեղծության այդ տեսակը մենք անվանել ենք դեկորատիվ-նկարագրական²⁶:

²⁶ Козмоян А. К. Рубаи в классической поэзии на фарси (10-12 вв.), Е., 1981, с. 16. Այդ մասին նաև՝ Հայոց և պարսից միջնադարյան քնարերգության համեմատական պոետիկան, Ե., 1997, էջ 117:

Հնագույն շրջանի և միջնադարի վերաբերյալ այս հպանցիկ համեմատությունն արվեց միայն այն բանի համար, որ պարզ դառնա, թե ինչպես հասարակարգային փոփոխությունների և պատմական մեծ տեղաշարժերի հետ մեկտեղ փոխվում էին ժամանակի մարտահրավերները, իրականության ընկալումը, գեղագիտական գիտակցությունը, նաև մշակույթի տիպը (հնագույն, միջնադարյան, ժամանակակից և այլն):

Ավեստան կրոնական, լեզվամշակութային, գրական, ազգագրական հուշարձան է և չնայած երկու դարից ավելի թարգմանվում և լուսաբանվում է աշխարհի բազմաթիվ լեզուներով, այնուհանդերձ, նրա ուսումնասիրությունը տարբեր կտրվածքներով մշտապես նյութ է տալիս նոր համեմատությունների, դիտարկումների և հարցադրումների: Ավեստան ուսուցանում է մեզ քաղաքակրթության ձեռքբերումների և հավերժ ճշմարտությունների գիտակցումն ու իմաստավորումը:

АВЕСТА КАК ДРЕВНИЙ ПАМЯТНИК ПЕРСИДСКОЙ ХУДОЖЕСТВЕННОЙ МЫСЛИ

КОЗМОЯН А. К.

Резюме

Авеста является преимущественно религиозным письменным памятником. При этом в Авесте наличествуют элементы художественного мышления, отголоски которого мы находим позднее в персидской исламской литературе. Однако это не столь отпечаток Авесты, сколь универсальное свойство человеческого образного восприятия мира, которое типологически неизменно для разных типов культур.